Ըսեց.—Օր ընդոր սպանեցիր, իմ ախչիկ քու�ն է, թէ դու սպանուար, կ'իտանք ընդոր։

Դաւիթ էդ տեղէն ետ դարձաւ ու գնաց. գնաց ձիու կուշտ, ձին թամքեց, գամեց ու դուս քաշեց, հեծաւ. էկաւ, կայնաւ Խանդուխ խանումի փանջարի առէջ ու Խանդուխ խանումին ըսեց.

—Խանդուխ խանում, ես կ'երթամ կռիւ։

Թէ՝—Վի՞ր հետ կռիւ կ'երթաս։

Թէ՝—Համզայ փահլեւանի[1]) վրէն պդի էրթամ կռիւ, ըսեց. խանում, մեր կռիւ քառսուն օր կ'քաշայ, քառսուն օրն օր թըմաւ, թէ էկայ, ես կ'իգամ, թէ չ'էկայ, դու կ'հագնիս մարդանակ շոր ու կ'առնիս քու պզտիկ ախպէր հետ, կ'իգաս իմ ջամդակ ջամդկներու մէջէն կ'ջոկիս ու թաղել կ'իտաս[2])։

Դաւիթ ձին հեծաւ ու քշեց. քշեց գնաց, շատ քիչ Աստուած գինայ, մէկէլ տեսաւ յառջևանց մէկ հմալ թոզ ու տուման կ'իգայ, օր Աստուած ազատայ. էկաւ, տեսաւ օր սրբի Սարգիսն է[3])։

Դաւիթ գնաց, օր սրբի Սարգսին համբուրէր. Սրբի Սարգիս ըսեց.

—Հանէ՛ քու սրբի նշան ես համբուրեմ, նոր դու ընձի համբուրէ։ Հանեց սրբի նշան, համբուրեց սրբի Սարգիս. էն լէ սրբի Սարգսին համբուրեց։

---

[1]) Ա. վարիանտում Դաւիթ Խանդուխի առաջարկութեամբ է գնում «Լօռայ Համզի Շապգոնց Խորասանու» գլուխը բերելու։

[2]) Բ. վարիանտում Խանդուխ խաթունը Դաւիթին ճանապարհ դնելիս, պատուիրում է Քարայ դաշտը չգնալ կռուելու, այլ Զիմանին, որովհետև Օղան-Ցօղան-Ջանջլխռանը (ըստ վարիանտի), որի հետ պիտի կռուէր Դաւիթ, սէհրական է, երկնքի երեսով գալիս, հարուածում է հակառակորդին և գետին գլորում։ Դաւիթը չի կատարում նորա պատուէրը և վտանգից միայն Զինով-Ցովանի աղդարարութեամբ է ազատուում, յիշելով Աստուծոյ անունը։

[3]) Ա. վարիանտով սուրբ Սարգիսը Դաւթին պատահում է «Ջանգռուայ դուրան»-ում, որ մի սարահարթ է Աբարանի և Լօռու մէջ։